600.0393.23.10.19.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

23 հոկտեմբերի 2019 թվականի №393Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №457Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2019 թվականի հոկտեմբերի 1-ին «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 1 տարի 3 ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի №457Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0616 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0616 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) ԼԷ №0616 լիցենզիայի պայմաններով Կայանի կառուցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան փորձաքննություն անցած նախագծի՝ դրական փորձագիտական եզրակացություններով (այսուհետ՝ Նախագիծ), Հանձնաժողով ներկայացման համար սահմանվել էր մեկ տարի ժամկետ,

գ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 81-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների և ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման նպատակով էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվում է լիցենզավորված անձի կողմից Նախագիծը ներկայացնելու դեպքում՝ կառուցման (վերակառուցման)

ժամանակահատվածից կամ նախորդ երկարաձգման ժամկետից կրճատելով Նախագծի ներկայացման համար լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետը (եթե այն պակաս չէ 2 ամսից),

ը) Կարգի 81-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ ԼԷ №0616 լիցենզիայի կառուցման ժամանակահատվածը Ընկերության կողմից հայցվող 1 տարի 3 ամսվա փոխարեն կարող է երկարաձգվել մինչև 2020 թվականի հոկտեմբերի 25-ը՝ կառուցման ժամանակահատվածից կրճատելով Նախագծի ներկայացման համար ԼԷ №0616 լիցենզիայի պայմաններով սահմանված 1 տարի ժամկետը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մեկ տարի ժամկետով երկարաձգել Հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №457Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0616 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի հոկտեմբերի 25-ը» բառերը փոխարինելով «մինչև 2020 թվականի հոկտեմբերի 25-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ ԼԷ №0616 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով Կայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում «Արդշինբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2017 թվականի հունիսի 9-ի №652-6019 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №ԱԲԵՆ17/38-12 երաշխիքի համաձայն երաշխավորված 19 500 000 (տասնինը միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 9 743 750 (ինը միլիոն յոթ հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել 19 487 500 (տասնինը միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 9-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք.Երևան
23 հոկտեմբերի 2019թ.